ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գոհունակությամբ հայտնում ենք, որ ս. թ. Հունիսի 8-ին Փարիզից Մայր Աթոռ վերադարձավ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետը Փարիզում բժշկական քննությանց ենթարկվեց Փարիզի հայտնի «Հոթել Դիյո» հիվանդանոցում՝ ուղղակի հսկողության ներքո Պրոֆեսոր Բերնադոի: Բժշկական ստուգումները կատարվելուց հետո, Պրոֆեսոր Բերնադոի հանձնարարությամբ Վեհափառը վերադարձավ Հայաստան՝ շարունակելու իր բուժումը Պրոֆեսորի ցուցումներով:

Վեհափառ Հայրապետին «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորելու էին եկել ՀՀ Կառավարության վարչապետ Տիար Հրանտ Բագրատյանը և Սբ. Էջմիածին վանքի բարձրաստիճան հոգևորականներ:

Հայոց Հայրապետին մաղթում ենք քաջառողջություն և երկար կյանք:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
10 Հունիս 1994